

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄԱՂԵՆԱ ՏԻԳՐԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**ԲՈՒՍԱՆՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ  
ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ  
(ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)**

Ժ.02.07- «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բոյուտովի անվան պետական  
լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Գ.Ռ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, դոցենտ Ա. Հ. Զիվանյան

բանասիրական գիտությունների  
թեկնածու Լ.Ս. Սահակյան

Առաջատար կազմակերպություն՝

Խաչատուր Աբովյանի անվան  
հայկական պետական  
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ. սեպտեմբերի 17-ին, ժամը  
12:30-ին ՀՀ ԲՈՀ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար  
լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի  
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.-ի օգոստոսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար  
բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Լեզվամշակութային ուսումնասիրություններում անհրաժեշտաբար ընդլայնվում է ուսումնասիրության առարկան, և ուշադրության կենտրոնում են հայտնվում թե՛ լեզվի և թե՛ մշակույթի վերբառային նշանակությունների՝ հասկացույթի և խոսույթի մակարդակները: Դրանք բոլորը միավորվում են լեզվական գիտակցության կառույցներում, որտեղ պահպանվում է առարկայական և խոսքային գործունեության կուտակած փորձը:

Սույն ատենախոսության **արդիականությունը** պայմանավորված է միջմշակութային հաղորդակցության, լեզվի և մտածողության փոխհարաբերության, լեզվական միավորների մշակութային բովանդակության նկատմամբ ժամանակակից հետաքրքրությամբ, որն իր լեզվաբանական արտացոլումն է գտնում լեզվամշակութային ոլորտի հետազոտություններում:

Աշխատանքի **նորույթը** պայմանավորված է առաջին հերթին ուսումնասիրության օբյեկտի ընտրությամբ, քանզի եթե դարձվածքների ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ հետազոտություններ կան, ապա բուսանունը՝ որպես դարձվածքների բաղադրիչ, զուգադրական մեթոդի կիրառմամբ չի կարելի լիարժեք ուսումնասիրված համարել: Ընդ որում, նշված դարձվածքները քննվում են լեզվամշակութաբանական տեսակետից՝ իբրև մշակույթը արտացոլող նշաններ, քանի որ բուսանուններով ձևավորված դարձվածքներում առավել լավ են պահպանվում և արտացոլվում սոցիալական և մշակութային կյանքի շատ իրողություններ, դրանց միջոցով ոչ միայն հաղորդակցվում ենք, այլև հաղորդում ենք զուտ ազգային մտածելակերպի նրբությունները:

Աշխատանքում նորույթ է նաև հասկացութային փոխաբերության տեսության և մեթոդի կիրառությունը լեզվամշակութային զուգադրության մեջ, ինչպես նաև լեզվի դարձվածաբանության ոլորտում բուսանունների փոխաբերման մեր առաջադրած իմաստային տիպերի տարբերակումը: Վերջապես, նոր է բուսանվանական դարձվածային միավորների ինչպես անուղակի, այնպես էլ՝ ուղակի իմաստների համակարգային վերլուծության փորձը:

Ներկայացվող ատենախոսության **օբյեկտ** ընտրվել են անգլերենի, հայերենի և ռուսերենի բուսանուն պարունակող դարձվածային միավորները, որոնք լեզվական գիտակցության կարգային կառույցների լեզվամշակութային տիպերն են և գիտակցության բոլոր մակարդակների սահմաններում ապահովում են ընդհանրացման, դասակարգման և վերացարկման գործողությունները: Վերջին տասնամյակում ավելի ու ավելի հաճախ ուսումնասիրության առարկա են դառնում լեզվի իմաստագործառական կառույցները, դիտարկվում են ամբողջական լեզվախոսքային կաղապարներ, կատարվում են ժամանակի [Գ. Հովհաննիսյան, 2001], Է. Ղազարյան 2004], հուլյի [Ռ. Առաքելյան 2005, Ա. Սահակյան 2008], գույնի [Հ. Ղազարյան 2003], մարմնի մասերի [Գ. Եղիազարյան 2007], սննդի [Ա. Հայրապետյան, 2009] և այլ (հագուստի, կենդանունների, քաղաքավարության, ծայնամանակումների) լեզվամշակութային համալիր վերլուծություններ:

Ատենախոսության **առարկան** բույսերի նշանակություններն են, որոնք ուղակի կամ փոխաբերաբար արտացոլում են գիտակցության և վարքի

կաղապարները և կազմում են լեզվական մտածողության վերբառային նշանակությունների՝ բուսանուն պարունակող դարձվածքների բովանդակությունը:

Հետազոտության **նյութը** անգլերենի, հայերենի և ռուսերենի բուսանուն պարունակող դարձվածային միավորներն են: Դարձվածքները, ըստ բազմաթիվ լեզվաբանների, ոչ միայն և ոչ այնքան լեզվի միավորներ են, որքան լեզվամշակութային փաստեր: Դրանցում բյուրեղացած է ժողովրդի բազմադարյա փորձը, նրա առօրեական իմաստությունը, արժեքային համակարգը, հոգեբանության և մտածելակերպի յուրահատուկ գծերը, վարքի կաղապարները, ծեսերը, բարոյական, գեղագիտական, կրոնական պատկերացումները, մի խոսքով՝ նրա հոգեկերտվածքն ու աշխարհայացքը:

Առենախոսության **նպատակն** է վեր հանել անգլերենի բուսանուն պարունակող դարձվածային միավորների իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները, պարզել բուսանունների նշանակությունների մշակույթով պայմանավորված իմաստները և վերջիններս զուգադրել հայերենի և ռուսերենի դարձվածային միավորների հետ:

Առաջադրված են հետևյալ **խնդիրները**.

- սահմանել լեզվամշակութաբանության էությունը և դարձվածային միավորները որպես լեզվամշակութային իրադրությունն արտացոլող նշան,
- անգլերենի, հայերենի և ռուսերենի դարձվածաբանական ֆոնդից դուրս հանել բուսանուն պարունակող դարձվածային միավորները,
- բացատրել բուսանուն պարունակող դարձվածային միավորների ծագումնաբանական առանձնահատկությունները՝ համակողմանի վերլուծության ենթարկել դարձվածաբանական համարժեքները,
- հաշվի առնելով զուգադրական քննության արդյունքները քննել անգլերենի, հայերենի և ռուսերենի բուսանուն պարունակող դարձվածային միավորները կառուցվածքային տեսանկյունից,
- բացահայտել բուսանվանական արտահայտությունների իմաստային փոխաբերացման տիպերը թվարկված երեք լեզուներում:

Ռեսուսնասիրության **մեթոդական հիմքը** լեզվամշակութային համեմատությունն է: Մասնավորապես, կիրառված են համընդհանուր ընտրանքի և վիճակագրական բաշխման, կոնցեպտուալ վերլուծության, իմաստային բաղադրիչների, կառուցվածքային վերլուծության, դասակարգման մեթոդները: Օգտվել ենք Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի կոնցեպտուալ փոխաբերման<sup>1</sup>, Ա.Ա. Լեոնտևի խոսքային գործունեության<sup>2</sup>, Լ.Ս Վիգոտսկու<sup>3</sup>, Ժ. Պիաժեի<sup>4</sup>, Վ.Պ. Ջինչենկոյի<sup>5</sup>, Վ.Ֆ. Պետրենկոյի<sup>6</sup>, Զ. Օսգուդի<sup>7</sup> տեսություններից և հայեցակարգային դրույթներից , մեր հետազոտության հասկացական գործիքակազմն ընտրելիս:

<sup>1</sup> Lakoff G. & Johnson M. Metaphors We Live By. Chicago: University of Chicago Press, 1980.

<sup>2</sup> Леонтьев А.А. Психолингвистические единицы и порождение речевого высказывания. М., 1969.

<sup>3</sup> Выготский Л.С. Мышление и речь. М., 1934.

<sup>4</sup> Пиаже Ж. Речь и мышление ребенка. М., 1932.

<sup>5</sup> Зинченко В.П. Миры сознания и структура сознания. М., 1991.

<sup>6</sup> Петренко В. Ф. Психосемантика сознания. М., 1991.

Ձ. Լակոֆի կոնցեպտուալ փոխաբերության տեսությունը ելակետ է դարձել դարձվածքների հիմքում ընկած գիտակցական կարգերի և օրինաչափությունների բացահայտման համար:

Աշխատանքի **տեսական արժեք** կարող է համարվել այն որոշակի նպաստը, որ բերում է լեզվական գիտակցության հիմնախնդիրների, ժողովրդական խոսքի նմուշների մշակութային բովանդակության հիմնահարցի ուսումնասիրությունը, ինչպես նաև լեզվամշակութային տիպերի զուգադրության արդյունքում ստացված եզրահանգումները: Դարձվածային միավորների ուսումնասիրության բազմաթիվ ըմբռնումներ ու հիմնահարցեր ատենախոսության շրջանակներում ներկայացվել են նոր մեկնաբանությամբ:

Ստացված արդյունքները **գործնական նշանակություն** կարող են ունենալ ինչպես իմաստաբանության, այնպես էլ ավելի լայն՝ հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության գործնական խնդիրների լուծման տեսանկյունից: Ատենախոսության շրջանակներում ներկայացված բուսանուն պարունակող դարձվածային միավորների ուսումնասիրությունը կարող է օգտագործվել լեզվի ճանաչողական գործառույթի հետագա ուսումնասիրություններում, դարձվածաբանության առնչվող գիտա-մեթոդական ձեռնարկներում:

Ատենախոսությունը կարող է հետաքրքրություն ներկայացնել նաև լեզվի հոգեբանության և լեզվամշակութաբանական խնդիրների լուծման առումով, օգտագործվել լեզուների էթնոհոգելեզվաբանական առանձնահատկությունների զուգադրական ուսումնասիրություններում:

Ատենախոսության **կառուցվածքը**, ատենախոսությունը բաղկացած է 191 էջից, ներառյալ ներածություն, չորս գլուխ, յուրաքանչյուր գլխի ավարտին ծանոթագրություններ և ատենախոսության վերջում՝ եզրակացություն, 41 էջ հավելված և 184 անուն գրականության և այլ աղբյուրների ցանկ:

**Ներածական բաժնում** ներկայացված են ատենախոսության տեսական և գործնական, ինչպես նաև մեթոդաբանական հիմքերը, թեմայի արդիականությունը, լեզվական նյութի ընդհանուր նկարագիրը, դրա մշակման և վերլուծության ժամանակ կիրառված մեթոդները, առաջադրված է ուսումնասիրության նպատակը և դրանից բխող լուծման ենթակա խնդիրները:

## Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Առաջին գլուխը՝ **Դարձվածի լեզվամշակութային զուգադրման հայեցակերպը**, բաղկացած է 3 ենթագլխից: Առաջին ենթագլխում («**Դարձվածի լեզվաբանական տեսության համառոտ ակնարկ**») արծարծվում է մշակույթի և լեզվի կապը, տրվում են սահմանումներ և տարբեր մոտեցումներ: Ներկայացվում են դարձվածային ոլորտին առնչվող տարբեր տեսություններ և դասակարգումներ, որոնք

---

<sup>7</sup> Osgood Ch. Cross Cultural, Cross Concept and Cross Subject Generality of Affective Meaning System // Journal of Personality and Social Psychology, 2, 1965.

հիմնականում, վերաբերում են դարձվածային միավորների կառուցվածքային նկարագրին:

Փորձելով ընդհանրացնել տեսակետները՝ նշենք, որ դարձվածաբանական միավորները հատկանշում են հետևյալ որակները. հակիրճություն (լակոնիզմ), խորինաստ ընդհանրացվածություն, պարզություն, օգտագործման ձկունություն, իմաստափոխության հնարավորություն, պատկերավորություն:

Երկրորդ ենթազվխում («**Լեզվի և մշակույթի համընդհանուր կարգերը**») նշվում է, որ բացի թվարկված լեզվաբանական առանձնահատկություններից՝ դարձվածաբանական միավորներն ունեն մշակութային և հաղորդակցական՝ խոսքային գործունեությամբ կուտակած փորձի կարգայնացման որոշակի մակարդակ: Մինևույն սկզբունքներով, որոնք կիրառվում են լեզվական այլ հայեցակերպերի զուգադրումը հնարավոր է դառնում համեմատել նաև դարձվածաբանական միավորները: Ընդ որում բովանդակության պլանի միասնականության պայմաններում արտահայտության պլանի բազմալեզու զուգադրությանը հարկ կլինի հավելել արժեքային պլանը, քանի որ հենց սրանով է լեզվի այս ոլորտը էականորեն և որակապես առանձնանում լեզվի այլ հայեցակերպերից:

Երրորդ ենթազվխում («**Մշակույթի լեզվական կարգայնացման դարձվածաբանական հայեցակերպը**») քննության ենթարկվող խնդիրը դիտարկվում է մշակութային կարգայնացման տեսակետից, որն էլ հնարավորություն է տալիս զուգադրել այս կամ այն առարկայի կամ երևույթի նկատմամբ տարբեր ազգերի մշակութային պատկերացումները:

Դարձվածաբանության մեջ միաժամանակ արտացոլվում են լեզվի և մշակույթի թե՛ հոգևոր և թե՛ նյութական արժեքները: Մասնավորելով այս ոլորտը բուսաշխարհի դարձվածաբանական կարգայնացման առումով՝ կարելի է բացահայտել, որ դրանք մի կողմից՝ արտացոլում են լեզվամշակույթի վարքային կանոններն ու կարծրատիպերը, մյուս կողմից՝ բուսաշխարհի մշակութային յուրացվածության ոլորտներն ու առանձնահատկությունները: Մշակութային մարդաբանության մեջ ընդունված է տարբերակել մշակութային արժեքների չորս հիմնական ասպարեզներ: Դրանք են՝ կենցաղը, իրականությունը, հոգևոր ոլորտը, գեղարվեստը: Բույսերը, ինչպես և բուսանունները լեզվում, ուրույն տեղ են զբաղեցնում բոլոր չորս ոլորտներում:

**Երկրորդ գլուխը՝ Բուսաշխարհի լեզվամշակութային կարգայնացումը անգլերենում, հայերենի և ռուսերենի զուգադրությամբ** բաղկացած է 2 ենթազվխից: Առաջին ենթազվխում («**Բուսանուն պարունակող դարձվածային միավորների ծագումնաբանությունը**») քննվում է անգլերենի, հայերենի և ռուսերենի բուսանվանական դարձվածքների ծագումնաբանությունը: Ամեն լեզվում կան ԴՄ-ների առաջացման լեզվական և արտալեզվական գործոններ: Լեզվական գործոններից կարևոր են տվյալ լեզվի բառային կազմը, հատկապես նրա իմաստային բազմազանությունն ու բառակազմական հնարավորությունները: Վերը նշվածից պարզ է դառնում, որ ավելի շատ ԴՄ-ներ կազմելու հնարավորություն ունի այն լեզուն, որի բառերն ավելի հարուստ բազմազանությամբ են օժտված. մի հատկանիշ, որը հատուկ է թե՛ անգլերենին, թե՛ հայերենին և թե՛ ռուսերենին: Արտալեզվական գործոններից են տվյալ լեզուն կրող ժողովրդի պատմությունն ու

աշխարհագրությունը, բնակլիմայական և տարածքային պայմանները, կենցաղն ու տնտեսական կյանքը, մշակութային կյանքն ու արժեքները, տվյալ ժողովրդի ոգին ու հոգեբանությունը, նրա լեզվամատծողությունն ու լեզվափիլիսոփայությունը:

Ըստ մեր դիտարկումների՝ ԴՄ-ների ձևավորման ու զարգացման գործում էական դեր են կատարում արտաքին գործոնները, որոնք էլ պայմանավորում են ԴՄ-ների ազգային բնույթը: Բուսանուն պարունակող անգլերեն ԴՄ-ների քննությունը պատմական տեսանկյունից հայերենի և ռուսերենի զուգադրությամբ թույլ է տալիս նկատել, որ նրանց մեծ մասը գալիս է հնուց՝ արտացոլելով ժողովրդական բանահյուսությունը, այդ լեզվով հաղորդակցվող ժողովրդի արժեքային համակարգը, բարոյական նորմերը, աշխարհայացքը, հոգեբանությունը, կենցաղի պայմանները, պատմական կենսափորձը, հավատալիքներն ու սնահավատությունները, սովորույթներն ու ավանդույթները: Մեկ այլ զգալի մաս կրոնական՝ քրիստոնեական մշակույթի արդյունք է:

Այս առումով առավել հետաքրքրաշարժ է դառնում լեզուների զուգադրումը, դրանք կրողների ավանդույթներն ու հավատալիքները, որոնցից շատերն իրականում պատմության գիրկն են անցել, բայց, այնուհանդերձ, շարունակում են իրենց գոյությունը ԴՄ-ների կազմում: Նման ԴՄ-ները մեծ հետաքրքրություն են ներկայացնում տվյալ լեզվի ազգագրական ուսումնասիրությունների համար:

Երկրորդ ենթազխում (**«Բուսանուն պարունակող դարձվածային միավորների լեզվամշակութային արժեքը»**) վերլուծության են ենթարկվում համեմատվող լեզուների դարձվածքների կազմում գտնվող և տվյալ լեզվի լեզվամշակութային ֆոնդի մաս կազմող բուսանունները, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝

1. բուսանուններ, որոնք բնորոշ են միայն ուսումնասիրվող լեզուներից մեկին,
2. բուսանուններ, որոնք բնորոշ են ուսումնասիրվող լեզուներից երկուսին,
3. բուսանուններ, որոնք բնորոշ են ուսումնասիրվող երեք լեզուներին:

Ներկայացվում են դարձվածքներում բուսանունների կիրառման պատճառները: Ընդգծվում է այն փաստը, որ յուրաքանչյուր լեզվում առավել շատ միավորներ հանդիպում են հիմնականում այն բուսանուններով, որոնք կազմում են տվյալ լեզվի լեզվամշակութային ֆոնդը: Մեկնաբանվում և ընդգծվում է բուսանուն պարունակող դարձվածային միավորների մշակութային արժեքը. բուսանուններով կազմված դարձվածքներն արտացոլում են ժողովրդի պատկերավոր մտածողությունը, նրա հոգեբանության յուրահատկությունները՝ միաժամանակ գաղափար տալով այն մասին, թե որ բուսանուններն են առավել հասանելի եղել նրա կենցաղին և մուտք գործել նրա պատկերավոր խոսքի ոլորտ: Ընդգծվում է այն փաստը, որ լեզվի ազգամշակութային յուրահատկության դրսևորումներից մեկը դարձվածքների հուզագնահատողական երանգավորումն է:

Ըստ մեր հավաքագրած նյութի՝ միայն անգլերենում բուսանուն պարունակող ԴՄ-ներին բնորոշ են *banana, daisy, bush, gooseberry, melon, weed, twig* բուսանունները: Նշենք, որ ռուսերենի բուսանուն պարունակող ԴՄ-ներում հանդիպում ենք հետևյալ բուսանունները՝ *ель, калина, клюква, береза, греча, чечевича, хрен, хмель, свекла, рябина, репа, розь, малина, сосна*.

Մեր կատարած եռալեզու զուգադրումը վիճակագրորեն փաստում է, որ նման բուսանունների քանակը հայերենում ավելի շատ է, քան ռուսերենում և անգլերենում:

Անդրադառնալով այն բուսանուններին, որոնք առկա են ուսումնասիրվող լեզուներից գոնե երկուսի մեջ՝ անգլերենում և հայերենում, կա՛մ հայերենում և ռուսերենում, կա՛մ անգլերենում և ռուսերենում, ստորև բերենք վերջիններիս անվանումները.

*Անգլերեն – հայերեն.* Carrot - գազար, pumpkin - դդում, wool/cotton - բամբակ/բուրդ, garden - այգի, nature - բնություն, cherry - կեռաս, branch/twig - ճյուղ, plum - շիր, wheat - ցորեն, lily – շուշան:

*Անգլերեն – ռուսերեն.* Berry - ягода, ginger - имбирь, oak - дуб, orange - апельсин, pea - горох, plant - растение, straw - солома, soil – почва, vegetable - овощ, potato - картофель, pepper - перец, vine - лоза, root - корень, oat - овес, leaf - лист.

*Հայերեն – ռուսերեն.* բողկ - редька, դեզ - сено, սխտոր - чеснок, տանձ - груша, չամիչ – урюк.

Բոլոր երեք ուսումնասիրվող լեզուների (անգլերեն, հայերեն և ռուսերեն) դարձվածքներում հանդիպող բուսանունների քանակը համեմատաբար քիչ է: Առավել հաճախ հանդիպում ենք.

*Nut - կաղին - орех, lemon – լիմոն/կիտրոն - лимон, cucumber - վարունգ - огурец, grass/herb – խոտ - трава, apple - խնձոր -яблоко, tree - ծառ - дерево, flower - ծաղիկ - цветок, cabbage - կաղամբ - капуста, grain- հատիկ - зерно, wood - անտառ - лес, field - արտ - поле, bean - բակլա/լոբի/ - бобы, mustard - մանանեխ - горчица, seed - սերմ- семя, onion - սոխ - лук, chestnut - շագանակ - каштаны, rose - վարդ - роза, fruit - միրգ/պտուղ - фрукт, mushroom - սունկ - гриб տարբերակները:*

Ամփոփելով վերը նշված օրինակները՝ բուսանուն պարունակող ՂՄ-ները կարող ենք բաժանել երկու խմբի.

1. տվյալ երկրին բնորոշ բուսանուններ պարունակող ՂՄ-ներ, օրինակ՝ *Go banana, Вот так клюква, Рашоմս ծիրան կա՛ բարև տալ կա, բաղոմս ծիրան չը կա՛ բարև տալ չկա:*

2. տվյալ երկրին ոչ բնորոշ բուսանուններ պարունակող ՂՄ-ներ, օրինակ՝ *After meat comes mustard, Սգած լիմոն, Зелен виноград не слаок, а молодой человек не крепок.*

Անդրադառնալով բուսանուն պարունակող ՂՄ-ներում կիրառվող բուսանունների կիրառության հաճախականությանը՝ ներկայացնենք անգլերենում, հայերենում և ռուսերենում ՂՄ-ներ կազմող բուսանունները: Հետաքրքրական է, որ յուրաքանչյուր լեզվում առավել շատ միավորներ հանդիպում են հիմնականում հենց այն բուսանուններով, որոնք կազմում են տվյալ ժողովրդի լեզվամշակութային համապատկերի մի մասը:



Հետևյալ բուսանունները անգլերենում, հայերենում և ռուսերենում չեն գտել իրենց համարժեքները համեմատվող լեզվաընտանիքներում՝

bush 11, banana 3, bean 8, bough 1, corn 1, daisy 2, gooseberry 2, melon 1, nutshell 2:

դդում 2, ընդդեմ 5, կուտ 3, հաճար 1, հասկ 1, ծավար 9, մեռն1, յոնջա 1, բլղուր1, դաղձ 2, ծիրան 7, կտավատ , ընդդեմ / հաճար, ծավար, կորկոտ և այլն/, բակլա 3, բարդի 2, բանջար 3, բորբոս 1, բողկ 7, բրինձ 3, չիր 2, ուռի 2, փուշ 25, սիսեռ 2, ռեհան 3, սմբուլ 1, խռնդաթ 8, խունկ 4, նուշ 4, խուրմա 3, կեռաս 1, կորկոտ 4, կորեկ 9, ծիլ 2:

береза 1, хмель 2, хрен 5, греча 3, рябина 3, бузина 1, ель 1, крапива 1, клюква 2, корень 12, калина 1, лавр 7, малина 3, овощ 1, олива 1, пальма 1, розь 12, редька 4, свекла 1, сосна 4, чечевица 1, шишка 1.

Կատարված վերլուծությունը պարզաբանում է, տալիս, որ 42 բուսանուններ անգլերենում, 73 բուսանուններ հայերենում և 75-ը ռուսերենում արտացոլված են զուգահրժիվող լեզուների ՂՄ-ներում: Ուսումնասիրվող երեք լեզուներում ամենաբարձր հաճախականություն ունեն *ծառ* բուսանունով ՂՄ-ները. 16 միավոր անգլերենում, 46 միավոր հայերենում և 29 միավոր ռուսերենում: Դա պայմանավորված է տվյալ երկրի բուսականության, տնտեսության և կենցաղում այս կամ այն բուսանվան կիրառությամբ: Առավել ամփոփ պատկեր ունենալու նպատակով ՂՄ-ներում առկա բուսանունները խմբավորել ենք նաև ըստ հետևյալ դաշտերի: Ըստ այդմ ստացել ենք հետևյալ խմբերը.

- միրգ - fruit, apple, banana, pear, lemon, fig, orange, grape, peach, melon, plum, cherry, nut, peanut, chestnut, cocoa-nut, լիմոն//կիտրոն, խուրմա//արմավ, խնձոր, թուզ, կեռաս, ծիրան, խաղող, ձմերուկ, տանձ, պտուղ, շիր, арбуз, виноград, груша, лимон, плод, фи́га, яблоко, фрукты,
- բանջարեղեն - potato, onion, carrot, cucumber, cabbage, pepper, pumpkin, beet, cauliflower, mushroom, leek, դդում, լոբի, բակլա, բողկ, գազար, վարունգ/խիար, սոխ, սխտոր, կաղամբ, շաղգամ, лук, бобы, гриб, капуста, картофель, огурец, овощ, редька, репа, свекла, чеснок,
- հատապտուղ - berry, gooseberry, strawberry, blackberry, huckleberry, raspberry, մորի, մասուր, бузина, калина, клюква, малина, рябина, ягода,
- հացահատիկ - wheat, corn, grain, pea, bean, oat, բլղուր, գարի, ծավար, կտավատ, բրինձ, կորկոտ, հաճար, սիսեռ, ցորեն, рожь, горох, зерно, греча, чечевица,
- ընդդեմ - nut, կաղին, կուտ, ընկույզ//պոպոկ, չիր, նուշ, չամիչ, շագանակ, каштан, урюк, орех,
- համեմունք - mustard, ginger, pepper, մանանեխ, սմբուր, хрен, перец,
- բնություն - grass, garden, bush, soil, bough, leaf, root, tree, nature, nutshell, անտառ, հինա, այգի, բորբոս, խոտ, խռնդաթ, ճյուղ, սունկ, փուշ, փայտ, шишка, дерево, желузь, хмель, лес, корень, лист, почва, трава, растение, хна,
- ծաղիկ - daisy, lily, rose, շուշան, սմբուլ, վարդ, цветок, роза,
- ծառ - oak, բարդի, ուռի, береза, сосна, дуб, рябина, ель, лавр, олива, пальма,

- կանաչեղեն - herb, ռեհան, բանջար, կանաչի, դաղձ, արտ, յոնջա, cranuba,
- գյուղատնտեսություն - hay, cotton, wool, field, grain, դեզ, բամբակ, կորեկ, հատիկ, հասկ, ծիլ, սերմ, сeмя, поле, солома, сено,
- կրոն – մանանա, մեռոն, խունկ, манна.

Բուսանուն պարունակող դարձվածքների ուղղակի նշանակությունների քննությունը ցույց է տալիս, որ բույսերի դարձվածքային կարգայնացումը հիմնվում է ոչ միայն բնախոսական ընկալումների, այլև ծեսի, վարքի կաղապարների, խոսքի և բանականության առօրեական պատկերացումների վրա:

Դարձվածքների տարբերակիչ հատկանիշների ընդհանրությունները հիմք են դառնում յուրաքանչյուր ենթադաշտի ներսում առավել նեղ հոմանիշային շարքերի՝ մանրադաշտերի առանձնացման համար, որի միջոցով արտահայտվում է ենթադաշտի կառուցվածքահամաստային կմախքը: Յուրաքանչյուր ենթադաշտում առանձնանում է դարձվածքների մի մանրադաշտ, որոնցում պատճառաբանված չէ որևէ տարբերակիչ հատկանիշ. այդ խմբի դարձվածքներում պատճառաբանված են ենթադաշտի հիմքում ընկած մարդկային տիպական հատկանիշները:

Մյուս կողմից՝ տարբերակիչ հատկանիշները պայմանավորում են դաշտի անդամ դարձվածքների սահմանային հասկացական հակադրությունները: Այս հակադրությունների դիտարկումով են կոնկրետանում դարձվածքների իմաստային կառուցվածքի բոլոր առարկայական-հասկացական տարրերը:

Մշակութային տարբեր հիմքերի վրա ձևավորված ՂՄ-ների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ՝

1. առանձին բառերի պես դարձվածաբանական միավորները կարող են լինել փոխառված, այսինքն՝ կարող են համապատասխանել կենդանիների և բույսերի անունները, ինչպես նաև բնության և հասարակության տարբեր երևույթներ արտահայտող եզրույթները (տերմինները): Օրինակ՝ հայկական, անգլիական և ռուսական հետևյալ ՂՄ-ներում *You reap what you sow, Ինչ որ ցանես, այն էլ կհնձես, Что посеешь, то и пожнешь, The apple doesn't fall far from the tree, Պտուղը ծառից հեռու չի ընկնում, Яблоко от яблони не далеко падает,*

2. հաճախ նույն միտքն արտահայտող ՂՄ-ները տարբեր մշակույթներում ունենում են ոչ միայն տարբեր բույսերի, կենդանիների և երևույթների անուններ, այլ նաև տարբեր համատեքստեր, որոնք էլ արտահայտում են սովյալ մշակույթի առանձնահատկությունները: Օրինակ՝ *If you run after two hares, you will catch neither, Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնի, За двумя зайцами погонишься, ни одного не поймаешь, One swallow doesn't make a summer, Մի ծաղկով գարուն չի գա, Лучше воробей в руке, чем петух на кровле, A bird in the hand is worth two in the bush, При царе Горохе, When Queen Ann was alive, Նոյի թվին:*

**Երրորդ գլուխը՝ Անգլերենի բուսանուն պարունակող դարձվածային միավորների կառուցվածքային վերլուծություն հայերենի և ռուսերենի զուգահրոյթամբ բաղկացած է 2 ենթագլխից:**

Առաջին ենթագլխում («**Զուգահրոյթական մեթոդի դերը դարձվածային միավորների քննության մեջ**») Հարկ է նշել, որ լեզուների ուսումնասիրության

զուգահորական մեթոդը լեզվամշակութային ուսումնասիրությունների համատեքստում սկսել է ավելի ու ավելի մեծ տեղ զբաղեցնել ժամանակակից լեզվաբանության մեջ, քանի որ այն օգնում է «ներթափանցելու լեզվական երևույթների էության մեջ և առավել խորությամբ հասկանալու լեզվական գործընթացներն ուղղորդող օրինաչափությունները»<sup>8</sup>: Լեզուների զուգահորումը հնարավորություն է ընձեռում բացահայտելու արդեն հայտնի երևույթների նոր կողմեր, արձանագրելու նոր աղբյուրներ արդեն հայտնի փաստերի միջև<sup>9</sup>:

Այս մեթոդն առաջին հերթին ուղղված է համեմատվող լեզուների տարբերությունները բացահայտելուն, այդ պատճառով էլ կոչվում է նաև հակադրության (կոնտրաստիվ) մեթոդ:

Լեզվի կառուցվածքային նկարագրությանն են հանգում մշակույթում և գրականության մեջ եղած հասկացությունների կամ հասկացությունների իմաստային նկարագիրը և համեմատությունը [Աղայան 1987]:

Երկրորդ ենթազխում («**Քուսանվանական դարձվածային միավորների կազմությունը**») ըստ կառուցվածքային առանձնահատկությունների՝ բուսանուն պարունակող ՂՄ-ները բաժանել ենք երկու խմբերի՝

- ՂՄ-ներ, որոնք ըստ կառուցվածքի համապատասխանում են բառակապակցությունների:
- ՂՄ-ներ, որոնք ըստ կառուցվածքի համապատասխանում են նախադասությանը:

*ՂՄ Բառակապակցությունը*, ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, լինում է.

### 1. անվանական

ա) գոյականական. *wild oats, clinging vine, Adam's apple, banana oil, victory garden, գազարակեր էշ, ծաղիկ հասակ, լիխած ծիրան, եղենական խնձոր, արգելված պտուղ, անհոտ ծաղիկ, дубовая голова, лавровый венок, оливковая ветвь.*

բ) ածականական. *by ginger, բողկի պես առողջ.*

գ) դերանվանական. *my cabbage*

2. դերբայական. *gild the lily, get beans, give beans, play gooseberry, say with flowers, make hay, գարի գցել, փուշը թողնել, ծիլ տալ, խնկով փնտրել, կորեկ ծակող, ծիլ տալ, пожинать лавры, изрубить капусту, гадать на добах.*

3. մակբայական . *full of beans, against the grain, ծառն ի վեր, на почве, как огурчик.*

Նախադասություն ՂՄ-ների շարքը դասվում են այն կապակցությունները, որոնք կազմավորվում են միայն իբրև նախադասություն՝ ստորոգմամբ: Վերջիններս ունեն հետևյալ բնորոշ գծերը.

- բաղադրիչները գերազանցապես կայուն են. կամընտիր անդամներով նախադասություն ՂՄ-ները համեմատաբար սակավաթիվ են: *He that will eat the*

<sup>8</sup> Ярцева В.Н. Контрастивная грамматика. М., 1981.

<sup>9</sup> Щерба Л.В. Языковая система и речевая деятельность. Л., 1974.

kernel, must crack the nut, երկու էշի գարի չկարողացավ բաժանել, He зрел виноград – невкусен, а молодой человек не укусен.

- նախադասություն ՂՄ-ների բայ բաղադրիչները եղանակային սահմանափակ ձևով են դրվում. *Bring back the roses to her cheeks, Ով ասե մաստ խիար է, աղը կառնի, կվազե, Пустив козла в огород – яблонь страхом не огородить.*

Ըստ այս դասակարգման՝ բուսանուն պարունակող ՂՄ-ների շարքում առանձնացնում են հետևյալ բնորոշ կապակցությունները.

- համադասական կառույցներ. ՂՄ-ի բաղկացուցիչ մասերը նախադասության համադաս անդամներ են՝ արտահայտված միևնույն խոսքի մասով: Օրինակ՝ *One beats bush, and another catches the birds, Հարիր հալ բամբակ կա ու հարիր ու մեկ ծակ կա, Без косы и сена не накосят.*

- ստորադասական կառույցներ. Ըստ բառաքերականական իմաստի այս ՂՄ-ները մակբայական են, նրանց բաղադրիչների շարահյուսական կառուցվածքը կայուն է և սկսում է կապով: Օրինակ՝ *Though you cast out nature with a fork, it will still return, Իշուն գարի խաշին, որ չկերավ՝ գլխուն քաշին, Хоть трава не расти, Лучше своя сорная трава, чем привозная пшеница.*

- բայի ժխտական ձևերով կառույց. Ըստ բառաքերականական իմաստի՝ այս ՂՄ-ները բայական կամ մակբայական են: Նախադասության մեջ կատարում են ստորոգյալի կամ պարագայի դեր: Ունեն կայուն շարադասություն: Օրինակ՝ *No garden without its weeds, Արջը մեշից/անտառից խռովել է, մեշեն խաբար չունի, He садись под чужоу забор – а хоть в крапиву, да под свои.*

Ըստ հիմնական բաղադրիչի խոսքիմասային պատկանելության՝ բուսանուն պարունակող ՂՄ-ներն արտահայտում են կամ առարկայական, կամ ստորոգելիական, կամ էլ հատկանշման հասկացություն: Վերջիններս, ըստ հիմնական բաղադրիչի պատկանելության, լինում են բայական, գոյականական, ատականական:

Նախադասության տիպերի տեսակետից ՂՄ-ները, ըստ իրենց հաղորդակցական գործառնության և հնչերանգի, լինում են հետևյալ տիպերի՝ պատմողական, հրամայական, հարցական, բացականչական: Սա նշանակում է, որ հաղորդակցման գործընթացում նախադասության տիպից կախված է կողմերի հետագա խոսքային վարքագիծը. նախադասություն ՂՄ-ներ գործածվում են իբրև բարոյախրատական բովանդակության շարադրանքի ամփոփում, խոսքը եզրահանգող միջոց կամ, ընդհակառակը, թեմայի ծավալման առիթ:

**Չորրորդ գլուխը՝ Անգլերենի բուսանուն պարունակող դարձվածային միավորների իմաստային կադասարները** բաղկացած է 2 ենթագլխից:

Առաջին ենթագլուխը («**Բուսանունների փոխաբերումը անգլերենի, հայերենի, ռուսերենի դարձվածաբանության մեջ**») վեր է հանում լեզվական մտածողության պատկերային հիմքի մասին դրույթը, որը վերահաստատվում է կոնցեպտուալ փոխաբերություն տեսության շրջանակներում: Այդ տեսության հիմնադիր Ջ. Լակոֆը պնդում է [1980], որ մարդկային ճանաչողությունը, այդ թվում՝ վերացական մտածողությունը, մեծապես պայմանավորված է գիտակցության ստորին մակարդակներով: Գիտակցության տարբեր կողմերի և մակարդակների

Նման փոխալայնամանավորվածության ըմբռնումը Լակոֆն ամփոփում է կոնցեպտուալ փոխաբերության հասկացության մեջ, որը նա սահմանում է իբրև մեկ իմաստային ոլորտի կոնցեպտուալ կառույցների արտապատկերում մյուս իմաստային ոլորտում: Բուսաշխարհի լեզվական կարգայնացման ամենատարածված և արմատական եղանակը հենց բույսի և դրա մասերի հասկացական և փոխաբերական կիրառումն է մարդկային կյանքի և խոսքային գործունեության գրեթե բոլոր բնագավառներում: Այսպես, «բույս» կարգի բառիմաստային ստորակարգային՝ հիպոնիմիկ բաղկացուցիչներն են *արմատ, բուն, ճյուղ, թերթ, սերմ* հասկացությունները, որոնք մեզ հայտնի գրեթե բոլոր լեզուների բառային և կապակցական մակարդակներում պատմականորեն ստացել են բազում իմաստներ և կիրառություններ: *Արմատ* - հիմք, ելակետ, սկիզբ, *բուն* - մարմին, հենարան, *ճյուղ* - ոլորտ, մաս, *թերթ* - էջ, *սերմ* - բույսի կամ կենդանական սերմ, ցեղ, սերունդ, *պտուղ* - ժառանգ, զավակ, երեխա, *բարդի* - բարեկազմ հասակով, *գարի* - անպետք, էժանագին բան, *բանջար* - ուտելի բույսեր, *խունկ* - զոհաբերություն, պաշտամունք, *դղում* - հիմար: Նման փոխաբերման և կարգայնացման բուսանունները ենթարկվում են նաև դարձվածաբանական մակարդակում, ավելի ծավալուն՝ մշակութային համատեքստի հենքի վրա:

**Երկրորդ ենթագլուխն («Բուսանուն պարունակող դարձվածային միավորների եռալեզու իմաստաբանական վերլուծություն»)** ամփոփում է չորրորդ գլխի զուգադրական աշխատանքը: Բուսանուն պարունակող ՂՄ-ները հետաքրքրական են նաև այն առումով, որ արտացոլում են տվյալ ժողովրդի հոգեբանությունը, նրա լեզվամտածողության ազգային յուրահատկությունները: Այսպես օրինակ՝ աշխատասիրություն հմտություն/անբանություն – ծուլություն հասկացությունները արտահայտվում են հետևյալ ՂՄ-ներով՝ *He that would eat the fruit must climb the tree*, *Ճաշի տակին պառկելուն, բերանդ տանձ չի ընկնի*, *Как нурог с грудаму, так все с руками; а как плеть с узлом, так и прочь с кузлом*.

Մարդկային բնավորության բնորոշ գծերի նմանությունն ու տարբերությունն իրենց արտացոլումն են գտել հետևյալ ՂՄ-ներում՝ *As like as two peas*, *Բլղուրը բրինձ չի լինի*, *Одного поля ягода*.

Մեր թեմայի շրջանակում մարդկային արժանիքները գնահատելիս տարբերակել ենք *արժանավոր - անարժան* հասկացությունը հետևյալ ՂՄ-ներում՝ *A myrtle among nettles is a myrtle still*, *Կարմիր խնձորին քարավ կտան*, *Ha красный цветок и пчела летит*.

Հաշվի առնելով իմաստի գնահատողական բաղադրիչը՝ կարող ենք ասել, որ հայերենի բուսանուն պարունակող ՂՄ-ներին ավելի բնորոշ է բացասական երանգավորումը, իսկ անգլերենում և ռուսերենում ավելի բազմազան ու հարուստ է չեզոք գնահատական պարունակող ՂՄ-ների կազմը: Այսպիսով, ուսումնասիրելով մեր կողմից հավաքված լեզվական նյութը, հանգել ենք այն ընդհանրացմանը, որ մարդուն գնահատում և բնութագրում են՝ ըստ

- արտաքին տեսքի
- ֆիզիկական բնորոշ գծերի
- անձնային որակների
- բարոյական առանձնահատկությունների

- խոսքի առանձնահատկությունների
- բարոյա - էթիկական նկարագրի

Համապատասխանաբար, ելակետ ընդունելով անզլերենի, հայերենի և ռուսերենի դարձվածաբանական միավորները, դրանք խմբավորել ենք ըստ հետևյալ իմաստային տարրերի՝

- **Արտաքին տեսք**

*Դեմք, երես . As red as a cherry, մի կծած խնձոր, Красен как свекла, как кровь, как клюква, как маков цвет.*

*Հասակ, կառուցվածք. to spring like a rose* ԴՄ-ի մեջ ի նկատի են առնում աճի արագությունը: Հայերենի *հասակ նետել* արտահայտության մեջ չնայած բուսանուն չկա, բայց նետել բառը զուգորդվում է ընծյուղ հասկացությանը, քանի որ հայերենում կա *ընծյուղ նետել* կապակցությունը: Իսկ «բարձրահասակ», «լավ կառուցվածքով» իմաստները իրենց տեղն են գտել *as straight as a cedar, Ծымб строиноу как береза, բարդու պես բարակ, չինարի բոյ* ԴՄ-ներում:

*Արտաքին տեսք. You cannot judge a tree by its bark.* Հայերենում և ռուսերենում այս իմաստն արտահայտված է մի շարք ԴՄ-ներով, որոնցից ոչ մեկը, սակայն, բուսանուն չի պարունակում:

*Փորձված-անփորձ կամ տարիքով-երիտասարդ. Between grass and hay, Ծառը քանի բար շատ ունենա, զուխը կախ կը գցի, Тухлое дерево не срубится, а выкорчевывать.*

- **Ֆիզիկական բնորոշ գծեր**

*Ծերանալ.* Ժամանակի ընթացքում մարդը կորցնում է իր ուժն ու հմայիչ արտաքինը, ծերանում է. այս միտքն արտահայտած է *The bloom is off the peach* ԴՄ-ի մեջ: Կան ԴՄ-ներ էլ, որոնք բնութագրում են տարեց մարդկանց, ինչպես օրինակ՝ «փորձառու մարդ, որը խորհրդի կարիք չունի» արտահայտությունը – *crab tree կամ the older the crab tree the more crabs it bears*. Տարեց մարդկանց բնորոշ անհարմարվողականության իմաստը անզլերենում արտահայտում են *remove an old tree and it will wither to death* ԴՄ-ով:

*Առողջ և եռանդուն* լինելու գաղափարն արտահայտվում է հիմնականում “fresh” բառի միջոցով, ինչպես *Fresh as a daisy, Fresh as a buttercup, Fresh as a rose*: Այս համեմատական կառույցներում առկա են “daisy” “buttercup”, “rose” բուսանունները, որոնք համարվում են թարմության և կենսունակության խորհրդանիշ:

- **Անձնային որակներ**

*Անհատականություն: There is no rose without thorn, Առանց փշի վարդ չկա, Нет розы без шипов.*

*Ճշմարտություն: Every bean has its black, There is no garden without weeds, Ծիրանն իր ծառի տակին վեր կընկնի, Нет того дерева, чтоб на нее птица не садилась.*

- **Բարոյական առանձնահատկություններ**

Վախկոտություն: *He that fears every bush must never go abriding, Չայլից վախենալով անտառ չմտնել, Волков бояться - в лес не ходить.*

Բարեկեցիկ կյանք: *He is as bare as the birch at Yule even, գարու հորն ընկնել, В малине оказаться ՂՄ-ում:*

Երեխաներ: *The apple never falls far from the tree, Բաժուրի քիչ քիչ հեռու, Распу как грибы после дождя, սունկ աշխարհ գցել:*

Fig և grape բուսանունների միջոցով է արտահայտվում այն միտքը, որ հնարավոր չէ ինչ-որ մեկին փոխել: *Of a thorn springs not a fig, of a thorn not a grape, Ինչ ցանես, այն կհնձես:*

Անզվիացիները նկատել են, որ մեկ անձը կարող է փչացնել մարդկանց մի ողջ խումբ: «Խնձոր» բուսանուն պարունակող հետևյալ ՂՄ-ը դրա վառ ապացույցն է: *The rotten apple injures its neighbours, От одного порченого яблока целый воз загнивает.*

Մարդը չպետք է խառնվի ուրիշի գործերին, և այս խորհուրդն իր արտացոլումն է գտել «ծառ» բուսանուն պարունակող ՂՄ-ում: *Put not your hand between the bark and the tree:*

- **Խոսքի առանձնահատկություններ**

Շաղակապատություն և անբովանդակ խոսք: *Fine words better no parsnips սխտոր ծծել, Красно поле рожью, а речь ложь.*

- **Բարոյաբեղական նկարագիր**

Հյուրասիրություն: *Welcome as flowers in May (Այս միտքն իր արտացոլումը չի գտել բուսանուն պարունակող հայերեն և ռուսերեն ՂՄ-ներում):*

Անզվիացիները կարծում են, թե մարդ պետք է գերազանց կատարի ձեռնարկած աշխատանքը: Այս քննադատությունն առկա է *A barley corn is better than a diamond to a cock* ՂՄ-ում գլխավոր և երկրորդական նախադասությունների հակադրման միջոցով:

Աշխատանք. Յուրաքանչյուր աշխատանք ջանք է պահանջում: Առանց համբերատարության ոչ մի գործ հնարավոր չէ անել: Այս միտքն արտահայտվում է *Sweet is the nut, but bitter (hard) is the shell, He that would eat the fruit must climb the tree* ՂՄ-ներում: Անզվերենում կան նաև այլ ՂՄ-ներ, որոնք բնորոշում են աշխատանքը: *If you want roasted bananas, you must burn your fingers first.* Հայերենում ունենք *Մեկ խփելով ծառը չի վեր ընկնի* ՂՄ-ը, որը մատնանշում է ինչ-որ բանի հասնելու համար շատ աշխատելու հանգամանքը: Ռուսերենում այս միտքն արտահայտվում է այլ բուսանուն պարունակող ՂՄ-ով - *Бобы не грибы; не посеяв не взойдут, He that will eat the kernel must crack the nut* փոխառված լատիներենի հետևյալ ձևից՝ *Qui a nuce nucleum esse vult, frangit nucem.* Այստեղ ջանք թափել իմաստն արտահայտված է *to sow beans in the wind* ՂՄ-ում: Անզվիացիներն այն կարծիքին են, որ մարդուց իր ուժերից վեր բան չպետք է պահանջել, ինչպես ասենք *to ask pears of an elm-tree* ՂՄ-ում, որտեղ կիրառվում է “elm-tree” – ծփի բուսանունը: Այս ՂՄ-ը հիմնված է *to ask pears* բայական

կառույցի վրա: *Շատ ջանք թափել հեշտ աշխատանքի վրա* իմաստն արտահայտված է «բալ» և “billberry” բուսանունները պարունակող հետևյալ ՂՄ-ներում *To make two bits of a cherry, He will make nineteen bits of a billerry.* Խիստ դժվար աշխատանքի և բնավորության ծանր գծերով մարդու համար անզվիացիներն ասում են *A hard (tough) nut to crack.* Այս ՂՄ-ը հիմնված է «կաղին» բուսանվան իմաստի փոխաբերական գործածման վրա, որը նշանակում է շատ խելամիտ և խորամանկ մարդ: *Մեծ գործերը միանգամից չեն արվում* միտքն իր արտացոլումն է գտել «կաղնի» բուսանունը պարունակող հետևյալ ՂՄ-ում *An oak is not felled with one stroke,* նույն միտքն արտահայտվում է *To take the chestnut out of the fire with the cat's paw* հիմնված բայական *to take the chestnut out of the fire* կառույցի վրա:

*Մարդուն ճանաչում են իր արարքներով* խրատական ճշմարտությունը արտացոլվել է «ծառ» բուսանունը պարունակող հետևյալ ՂՄ-ներում *A tree is known by its fruit.* Հարկավոր է նշել, որ «ծառ» բուսանունը պարունակող ՂՄ-ներն արտահայտում են տարբեր իմաստներ: Օրինակ *to bark up a wrong tree* ունի սխալվելու իմաստ: *Cannot see the wood for the trees* – նշանակում է չտեսնել բուն իմաստը՝ խորանալով մանրամասների մեջ: Այս ՂՄ-ում փոխաբերական իմաստով «ծառ»-ն ունի «մանրամասների» իմաստ: Հայերենում այս կաղապարում արտահայտվում է բուսանուն պարունակող բազմակի ՂՄ-ների օգնությամբ: Օրինակ՝ *Կրակից շագանակներ հանել, Հորովել տալով արտը չի վարվի, Լավ տանձը արջն ա ուտում, Լավ հնձվորը դաշտումն էլ կը հնձի, սարումն էլ, Далеко сосна stout, а своему лесу веет.*

Ատենախոսության ավարտին հանգում ենք հետևյալ **եզրակացության**.

Լեզուն և մշակույթը անքակտելիորեն փոխկապակցված են. դժվար է ասել, լեզվով է պայմանավորված մշակույթը, թե մշակույթով՝ լեզուն, սակայն միանշանակորեն, լեզվի քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու մշակույթի էական գծերը: Եթե զուգադրական համեմատությունը ավանդաբար ենթադրել է լեզվական եզրային ձևերի բացահայտում, ապա լեզվամշակութաբանական զուգադրության մեջ բացահայտվում են իմաստակառուցվածքային եզրերն ու ընդհանրույթները, որոնք հնարավոր է արտածել միայն մարդու համալիր՝ առարկայական և խոսքային գործունեության քննության ժամանակ: Նորովի են փոխհարաբերվում այն լեզուներն ու մշակույթները, որոնց մի մասը, դերի բարձրացման շնորհիվ ներկրում է մյուսների բովանդակությունն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Այդպիսի միտում դրսևորվում է նաև հայերենում և ռուսերենում, որտեղ անզվիական մշակույթի ներթափանցումները բազմաթիվ են:

Դարձվածաբանության մեջ միաժամանակ արտացոլվում են լեզվի և մշակույթի թե՛ հոգևոր և թե՛ նյութական արժեքները: Մասնավորելով այս ոլորտը բուսաշխարհի դարձվածաբանական կարգայնացման առումով՝ կարելի է բացահայտել, որ դրանք մի կողմից՝ արտացոլում են լեզվամշակույթի վարքային կանոններն ու կարծրատիպերը, մյուս կողմից՝ բուսաշխարհի մշակութային յուրացվածության ոլորտներն ու առանձնահատկությունները: Բուսանուն պարունակող դարձվածքների ուղղակի վերաբերությամբ պայմանավորված



իմաստների հիմքում առօրյա գիտակցությունն է: Լեզվական գիտակցության ազգամշակութային առանձնահատկությունները պահպանվում են իմաստների գնահատման համակարգի ձևով կարգային ու իմաստային կառույցների յուրօրինակության մեջ: Այլ խոսքով՝ բուսանուն պարունակող դարձվածքների ուղղակի վերաբերության ուղորտը բույսերի կիրառությունն է, որն էլ քննվող նյութի գաղափարն է: Հենց սա էլ լեզվամշակութաբանական տիպերի մեր ուսումնասիրության հիմքն է:

1. Բուսանուն պարունակող ՂՄ-ների ուսումնասիրության առանձին ոլորտ է վերջիններիս ծագմանաբանությունն ու սովյալ ժամանակահատվածում դրանց կիրառման լեզվական և արտալեզվական գործոնները, պատմական կայունությունը: ՂՄ-ների պատմական կայունությունը բացատրվում է մի շարք ճշգրիտ առանձնահատկությունների ամբողջությամբ, ՂՄ-ների հատուկ կազմությամբ, որն արտահայտվում է հաճախակի օգտագործվող կարևոր կանոնների ներքին կառույցում: ՂՄ-ների պատմական կայունությունն ի հայտ է գալիս դրանց հետևյալ հայեցակերպերում՝

- ՂՄ-ի գոյատևմամբ, դրանք փոխանցվում են սերնդե սերունդ՝ արտասցովելով հանրության առարկայական և խոսքային գործունեությունը և արժեքների մշակույթով բնորոշված գծերը,

- ՂՄ-ների ընդգրկուն կիրառմամբ թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում. այս երկու գոյակերպով են պայմանավորված դրանց մի կողմից կայունությունը, մյուս կողմից՝ տարբերակային բազմազանությունը, որը գալիս է հաղորդակցման իրադրությունների բազմազանությունից:

- դրանց իմաստակառուցվածքային ճանաչելիությունը որը մեծ մասամբ պայմանավորված է քերականական կառուցվածքի բարձր կապակցելիությամբ և հնարավոր է դարձնում տեսականորեն դրանք դիտարկելու որպես լեզվախոսքային միավորներ:

Այս երեք հայեցակերպերն են կազմում լեզվամշակութաբանական հիմնասյուները:

2. համեմատություն, նմանություն-տարբերություն, արժանիքներ, բնավորության գծեր, վիճակ, վերաբերմունք, դաստիարակություն, չափի զգացում, պատճառ-հետևանք, օգուտ-վնաս, միահամուռ ուժ, արդարություն-անարդարություն, զրկանք, աղքատություն-հարստություն, անհաշտություն-միաբանություն, քանակ-որակ, բնություն-եղանակ, հիվանդություն-առողջություն, գուշակություն, երիտասարդություն-ծերություն, կարոտ:

3. Որպես վերարտադրվող լեզվական միավորներ՝ ՂՄ-ներն ունեն ամբողջական կառուցվածք և բաղկացած են ձևաբանական ու շարահյուսական տարբեր առանձնահատկություններ ունեցող բառերից: Ըստ կառուցվածքային առանձնահատկությունների՝ բուսանուն պարունակող ՂՄ-ները բաժանել ենք երկու խմբի.

1) ՂՄ-ներ, որոնք ըստ կառուցվածքի համապատասխանում են բառակապակցությունների: Վերջիններս ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, լինում են անվանական, դերբայական, մակբայական:

2) ՂՄ-ներ, որոնք ըստ կառուցվածքի համապատասխանում են նախադասությանը և լինում են՝ պարզ և բարդ: Պարզերը լինում են՝ միակազմ

անենթակա, միակազմ անդեմ. սրանք էլ, իրենց հերթին կարող են լինել բայական, անվանական: Բարդերը լինում են համադաս, ստորադաս: Հարկավոր է նշել, որ շատ դեպքերում այս տարաբաժանումը պայմանական է, քանի որ խոսքային իրադրություններում հաճախ նախադասություն-ԴՄ-ները կրճատված կամ երկանդամ բաղադրիչներով կարող են ներկայացված լինել: Համապատասխանաբար, ըստ հիմնական բաղադրիչի խոսքիմասային պատկանելության՝ բուսանուն պարունակող ԴՄ-ներն արտահայտում են կամ առարկայական, կամ ստորոգելիական, կամ էլ հատկանշման հասկացություն: Վերջիններս, ըստ հիմնական բաղադրիչի պատկանելության, լինում են բայական, գոյականական, ածականական, թվականական, մակբայական, դերանվանական:

4. Ոչ բոլոր բույսերն են հիշատակվում միևնույն լեզվամշակույթի ԴՄ-ներում: Ինչ վերաբերում է բույսի կամ բուսանվան միջմշակութային գործաբանական փոխակերպմանը, այստեղ գործում է որոշակիորեն բարձր հաճախականության սկզբունքը. միջմշակութային փոխակերպման են ենթարկվում և առավել հաճախ հիշատակվում են այն բույսերն ու բուսանունները, որոնք արտացոլում են ժողովրդի կյանքը, նիստուկացը, հասարակական և բարոյական արժեքների ընդհանուր համակարգը, շրջակա միջավայրի ու աշխարհի ազգահոգեբանական ընկալման առանձնահատկությունները, հավատալիքները, ավանդույթներն ու սովորույթները, ինչպես նաև աշխարհագրական առանձնահատկություններն ու պատմությունը: Այլ կերպ ասած՝ միևնույն իմաստային գործառույթով տարբեր լեզվամշակույթներում կարող են ներկայացված լինել տարբեր բույսեր և բուսանուններ կախված տվյալ լեզվամշակույթում դրանց մասին եղած պատկերացումներից և վերաբերմունքից:

5. Դարձվածքների տարբերակիչ հատկանիշների ընդհանրությունները հիմք են դառնում յուրաքանչյուր ենթադաշտի ներսում առավել նեղ հոմանիշային շարքերի՝ մանրադաշտերի առանձնացման համար. զուգադրվող լեզուների ԴՄ-ներում հանդիպող բուսանուններն ըստ նվազող հաճախականության վերլուծելիս նկատում ենք, որ յուրաքանչյուր լեզվի ԴՄ-ներում առկա են ինչպես տվյալ բնաշխարհին, այնպես էլ այլ երկրների բնաշխարհին հատուկ բազմազան բուսանուններ: Առավել ամփոփ պատկեր ունենալու նպատակով ԴՄ-ներում առկա բուսանունները խմբավորել ենք նաև ըստ հետևյալ խոշոր իմաստային դաշտերի՝ կերակուր, հագուստ, զարդեղեն, բուժամիջոց, հումք-շինանյութ, պաշտամունք:

Երկայացված բաշխումը չի բացառում թվարկված կարգերի միջև միջանկյալ գոտիների առկայությունը, երբ մեկ բույսը/բուսանունը միաժամանակ պատկանում է մի քանի կարգերի, ընդհակառակը, դրանով առավել նկատելի է դառնում նրա բարձր գործածականությունը:

6. Վերջապես, ուսումնասիրելով մեր հավաքագրած լեզվական նյութը, հանգեցնիք այն ընդհանրացման, որ թե՛ անգլերենում և թե՛ հայերենում ու ռուսերենում բուսանվանական ԴՄ-ները հիմնականում գնահատում և բնութագրում են մարդուն ըստ նրա հետևյալ հատկանիշների.

- արտաքին տեսք (դեմք, հասակ, նմանություն կամ տարբերություն այլ մարդկանցից),
- ֆիզիկական բնորոշ գծեր (տարիք, առողջություն, անհատականություն),

- անձնային որակներ (վախկոտություն, արիություն...),
- բարոյական առանձնահատկություններ (վախկոտություն, բարեկեցիկ կյանք),
- խուսքի առանձնահատկություններ (շատախոս, շփվող, ծույլ, գաղտնապահ, բամբասկոտ),
- բարոյաէթիկական նկարագիր (հյուրասեր, բարի, կյանքի փորձ ունեցող, հաջողակ): Նշված հատկանիշները առկա են ուսումնասիրված բոլոր երեք լեզուներում:

7. Կառուցվածքային տեսակետից ՂՄ-ներն արտացոլում են տվյալ լեզվի տիպական առանձնահատկությունները. իմաստային առումով կարելի է առանձնացնել հետևյալը. անգլերենում տարածում ունեն տեղի բնաշխարհին հատուկ բույսերի անվանումները: Եվ կան այսպես կոչված, միջազգային բույսերի անվանումների և համապատասխան դարձվածքների շերտը, որը ձևավորվել է քրիստոնեական համընդհանուր ավանդույթի, ապա առավելապես՝ միջնալուծային հաղորդակցման և քաղաքակրթության զարգացման շնորհիվ: Այս շերտի բուսանուններն, օրինակ, կաղնի, բանան, կարտոֆիլ, պոմիդոր և այլն, ստանում են զգալիորեն մեծացող հաճախականություն և աստիճանաբար դադարում են գնահատվել իբրև արտառոց կամ օտար: Բուսանուններից հայերենում ևս արտացոլված են հայ բնաշխարհում հայտնի սննդային, բուժական, գեղագիտական նշանակություն ունեցող բույսերի անվանումները: Ռուսերենում դրանք հիմնական անտառային և հացահատիկային բույսերի անվանումներ են: Նրանց նշակութային տարբերակվածությունը հիմնականում արտահայտվում է կենցաղի և գեղագիտական ավանդույթների իմաստային բաղադրիչներով:

**Աշխատանքն ունի երեք հավելված**, որոնք ամփոփում են ողջ լեզվական նյութը, ավելի քան 934 բուսանվանական ՂՄ:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում:**

1. Межкультурная трансформация фразеологизмов // «ՄԻԻԹԱՐ ԳՈՇ», Վանաձոր, «Իրավաբանական կենտրոն-press» 2008, էջ 26-29:

2. Աշխարհի լեզվական պատկերի արտացոլումը և միջմշակութային փոխակերպումը բուսանուններում // «Հանրապետական երիտասարդական գիտաժողովի նյութեր», Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2009, էջ 23-31:

3. Բուսանուն պարունակող դարձվածային միավորների հաղորդակցական փոխակերպումը // «Արվեստ և ժամանակ», Գյումրի, «Իմպրոռիթմ», 2009, էջ 59-63:

4. Բուսանուն պարունակող եռալեզու դարձվածային միավորների իմաստային կաղապարների վերլուծություն // «Գիտական աշխատություններ», Երևան, «Գիտություն», 2010, էջ 102-107:

5. A brief study of English proverbs and sayings with components of phytonyms and their co-relation with human qualities // «Հանրապետական գիտաժողովի նյութեր», Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2011, էջ 84-92:

6. Լեզվական և արտալեզվական գործոնների առկայությունը բուսանուն պարունակող ՂՄ-ների ծագումնաբանության մեջ // «Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, «Էլդորադո» 2011, էջ 31-39:

7. Բուսանուն պարունակող ՂՄ-ների իմաստահոգեբանական վերլուծություն // «Մշակույթների երկխոսություն», Գյումրի, «Իմպրոռիթմ», 2011, էջ 60-64:

**Аветисян Мадлена Тиграновна**

**СТРУКТУРНО-СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ  
ЕДИНИЦ С ФИТОНИМАМИ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ  
(в сопоставлении с армянским и русским)**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.07 - "Германские языки"

Защита состоится 17 сентября, 2014 года, в 12:30 на заседании специализированного совета 009 "Иностранные языки" при Ереванском государственном университете по адресу: Ереван, ул. Ал. Манукяна 1

**РЕЗЮМЕ**

Реферируемое диссертационное исследование посвящено трех язычному лингвокультурному анализу фразеологических единиц с частицами фитонимов. Анализ был осуществлен в рамках языковых концепций и теорий культурно-исторического развития, а также культурных универсалий, теории концептуальной метафоры, когнитивной лингвистики и когнитивной этимологии. Источником лингвистического материала являются разные словари актуальные в трех изученных языках.

В первой главе исследуется лингвистическая перспектива фразеологических единиц, рассматриваемых как отдельные языковые и речевые единицы, обладающие структурно-семантической целостностью и синтаксической независимостью.

Во второй главе выявляются генеалогические особенности фразеологических единиц с фитонимами в аспекте лингвистической категоризации растений и человеческой (людской) культуры. Каждый народ имеет свои пословицы, в которых отражаются условия его жизни и быта, его

история, его трудовая деятельность и социальные отношения. В главе рассматриваются как языковые так и внеязыковые структурно-семантические факторы фразеологических единиц с фитонимами. Она состоит из двух подглав, и каждая из которых посвящена раскрытию специфического типа трансформации фразеологических единиц из одной культуры в другую.

В третьей главе диссертации производится сопоставительный трехязычный анализ фразеологических единиц исходя из структурных перспектив. Фразеологизмы как языковые единицы изучаются при помощи интеркультурной трансформации компонентного и функционального анализов.

В четвертой главе на основе сопоставительного анализа языкового материала в контексте межкультурной коммуникации выявляются семантические типы и модели ФЕ с фитонимами. Обобщая характер, также как и метафорическое значение английских фразеологических единиц, можно заключить, что они отражают аспекты человеческой жизни. Будучи основанными на семантических концептах, универсалиях и языковых особенностях английского, армянского и русского языков, ФЕ с фитонимами характеризуют человека с точки зрения его/ее внешности (лицо, рост, внешний вид, сходство/различие), физических особенностей (возраст, здоровье, индивидуальность), этнических особенностей (социальное положение, состоятельность, трусость), речевых особенностей (разговорчивость, пустая болтовня, секретность), моральных концептов (гостеприимность, доброта, жизненный опыт, удача). В главе выявлены типичные структурные образцы ФЕ и приведены их универсальные семантические свойства. С целью изучения ФЕ с фитонимами осуществляется системно-аналитический подход. В результате, некоторые метафорические модели ФЕ обуславливают их дальнейшее использование в сопоставительных исследованиях других языков.

**Madlena Avetisyan**

**Structural-Semantic Peculiarities of Idiomatic Units  
Containing Phytonyms in English  
(in contrast with Armenian and Russian)**

**Summary**

The research paper aims at the comparative linguo-cultural analysis of idiomatic units containing phytonyms in the three languages and cultures mentioned. The analysis has been conducted within the scopes of linguistic conceptions and theories of cultural-historical development and cultural universals, the theory of conceptual metaphor, cognitive linguistics and cognitive epistemology. The language material is taken from various dictionaries and collections of phraseological units in the three languages.

The first chapter introduces the linguistic perspective of idiomatic expressions. This is an attempt to present them as a separate language and speech units, as they reveal structural and semantic integrity and syntactical independence in speech.

The second chapter elucidates on etymological specificities of idiomatic units containing phytonyms in the light of linguistic categorization of plants in human culture. Linguistic and extra linguistic factors as well as semantic and structural aspects are considered. The chapter consists of two subchapters, each of which is devoted to a specific type and transformation of idiomatic units from culture to culture.

The third chapter is the comparative trilingual analysis of the idiomatic units mentioned from the structural perspective. Intercultural transformation of idioms is discussed and illustrated by the help of componential and functional analysis of idioms as units of speech.

The primary focus in the fourth chapter of the research paper is on the semantic types and models inferred from the comparative analysis of the language material in the context of their cultures. The study of proverbs and sayings is impossible without the so-called "human factor". Proverbs and sayings are used by people when charactering someone/something or giving evaluation to someone/something. A man is characterized from the point of view of his appearance (face, height,

resemblance/unlikeness between people, outward appearance); physical characteristics (age, health, individuality); ethical characteristics (cowardness, welfare, social sphere); speech characteristics (talkativeness, idle talk, secretiveness); moral-ethical conceptions (hospitality, kindness, way of life, one's life's experience, luck) etc. Based on the conception of semantic primes and universals and linguistic peculiarities of English, Armenian and Russian, typical structural types are revealed and universal semantic features are drawn from the study. It is of importance to note that generalized character as well as metaphoric meaning of English proverbs and sayings account for wide use in teaching English. This is a systemic analytical approach, applied to the study of idioms containing phytonyms. As a result, some metaphorical models of idiomatic uses of phytonyms are proposed for further contrastive studies, that may be carried out in other languages.

We consider that the scientific significance of this research will provide a profuse material for further works on phraseology.

A handwritten signature in cursive script, appearing to read 'S. S. S.', located in the center of the page.